

Գուգկունճուքի կիները աշխատասեր են: Նորաձեւութեան մասին Իճատիէէն կ'առնեն իրենց դասերը:

Բամբասանք ընելու տրամադրութիւն չունին շատ, իսկ հագուստի մասին բամբասուելու բաւական յարմարութիւն ունին:

Գուգկունճուքի օդը հոտած ձուկ կը հոտի եւ կը ստիպէ հոն գացողն իւր քիթը բերանը ծամածռելու: Օդին պատճառաւն է, որ ընդհանրապէս Գուգկունճուքիները ծամածռած երես ունին:

ԺԸ.

ԱՐՏԱՔԻՆ ՔՈՒՄ ՔԱՐՈՒ

Արտաքին Քում Քաբուն բոլորովին տարբեր է ներքին Քում Քաբունէն, ինչպէս որ ամեն մարդու ներքինն տարբեր է արտաքինէն: Քում Քաբուի ներքինն օձ է, իսկ արտաքինն աղանի:

Քում Քաբուի ներքինն օտարէն կփախչի, իսկ արտաքինն անոր կփակչի. օրինակի համար, երբ տեղոյս նաւամատոյցին վրայ գտնուիս՝ բոլոր նաւավարներն շուրջդ կը պատեն եւ զգեստներէդ կը սկսին քաշել ու քաշքշել ըսելով.

–Սամաթիա՞ պիտի երթաս, աղա. եկու տանիմ:

–Եկուր երթանք, պարո՛ն:

–(Ականջդ ի վար) Ո՞ւր պիտի երթաս, բարեկամ:

–Դուն անոր ականջ մի՛ կախեր. անոր նաւակը ծակ է, տակէն ջուր կ'առնէ:

–Մտի՛ր, աղա, մտի՛ր. մէկ հոգի կ'ուզեմ, եկուր շուտ մը երթանք:

Փառք տուր Աստուծոյ, եթէ առանց զգեստդ պատառուելու կամ մէկ կողմդ կոտրուելու՝ կարողացար նաւակի մը մէջ նետել ինքզինքդ. իսկ ընդհակառակն, եթէ նաւակ չմտար եւ յետ դառնալ որոշեցիր՝ ականջներդ բաց եւ մտիկ ըրէ հետեւեալ ուղերձներն, որք յետեւէդ կուղղուին:

–Թո՛ղ տուր, պէ՛. նաւակ մտնելու դրամ չունի:

–Ինչո՞ւ չունենայ... տնտեսագիտութեան դար է հիմա. *տապանակ ու խտրով* (քալելով) աւելի շուտ կ'երթայ:

–Աղա, կօշիկներդ թելիդ տակն առ, որ չպատռին:

–Ոտներդ ալ կռնակիդ վրայ դիր, որ չյոգնին: